




ԱԶԱՏ ԽՕՄՔ

ՀԱՐԱԹ 1 ԴԵԿՏԵՄ. 1906. ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ

ՀԱՇՈՒԵՅՈՅՑ ԿՈՎԿԱՍԻ ԱՐԿԱԾԵԼՈՑ

ՀԱՆԳԱՆԱԿԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ



Մուտք	զրշ. ողջ
Հանդանակութեան բովանդակ գումարը	60343,50

Ելք	
Օգոստոս 21ին ղրկուած Վեհ. Հայրիկին	43875
Հոկտեմբեր 10ին » » »	13650
Նուիրատումներու տպագրութեան և հրատարակութեանց համար վճարուած	500
Անդանձեղի ֆնացած թիւ 101 և 106 ընկալագրերու փոխարժէքը	147,50
Պատրաստ դրամ	2171

զրշ. ողջ 60343,50


Վասն ճշտութեան՝ ի զիմաց հանդանակիչ Յանձնաժողովոյ

Գանձապետ	Ատենապետ
(ստոր.) Ա. Արշակեան	(ստոր.) Գ. Յ. Մելքոնեան

Աղեքսանդրիա, 21 նոյեմբեր 1906

Ման . - Յանձնաժողովս նկատելով որ Կովկասի անձկութիւնները իրենց այժմէութիւնը ալ եւ կորսնցուցած են և մնացորդ պատրաստի գումարը կարեւոր քանակ մը չի ներկայացնէր, որոշեց սոյն 2171 զրուշողջի գումարը յատկացնել Թուրքիոյ հայաշատ գաւառի մը ազգ. կարօտ վարժարանի մը պէտքերուն և ստուգուած ըլլալով Խարբերդի ազգ. վարժարանաց յոյժ անձուկ վիճակը և կարօտութեան մեծութիւնը, որոշեց միաձայնութեամբ սոյն գումարը յատկացնել նոյն քաղաքի ազգ. վարժարանաց, ապահով միջոցաւ ղրկելով զրամբ:

Յանձնաժողովը սոյն հաշիւները իրենց ամբողջ արդարացուցիչ թղթերով յանձնած է Ազգբանդրիոյ Թագ. Խորհրդոյն որսւ Ատենայպետին կողմէ ստացած է հարկ եղած պաշտօնական անդորրագիրը ի 22 նոյեմբեր 1906 և 440 թուահամարաւ:



Վեհ. Հայրիկը երկրորդ անգամ ըլլալով հետեւեալ օրհնութեան կոնդակը ուղղած է նպատամատոյց Յանձնաժողովին:

«Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի և անհատանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Ամենայն Հայոց Մայրադոյն Պատարիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ սրբոյ կաթողիկէ էջմիածնի մեծայարգ անդամոց նըպատամատոյց յանձնաժողովոյն հայոց Ազգբանդրիոյ, հարազատ օրդւոյ Մայր Աթոռոյս և սիրելի-

ժայց Թերոց քաղմասցին փրկչաւանդ սէր, ողջոյն և հայրապետական օրհնութիւնս

Բերկրութեամբ սրտի ընկալաք զգրութիւն անդամոց յանձնաժողովոյց ի 10 ամսոյս թիւ 380 ընդ որում և զփոխանակագիրն 140 անգլ. ոսկւոյ, թիւ 33104 գանձելի ի մասնաճիւղէ դրամատան Կրէտի Լիոնէ Օսեսայի, զնուիրաբերութիւնն հանգանակեալ ի մերազնէից տեղոյց ի նպաստ արկածերոց հայոց Կովկասու, և յոյժ մխիթարեցաք ի սիրտ և ի հոգի: Որդեակք, զուք որ ըստ բախտիս բերման տարագրեալ էք ի բնիկ հայրենեաց ձերոց յափունս նեղոսի, այլ չէք մտացեալ երբէք զարդի տապնապալից վիճակ համազգի եղբարց ձերոց, որք ի սահմանս Կովկասու, խանդաղատելով զնոքօք՝ յայտմ նուազի անդրէն ի յուշ ամեալ էք զարգահատելի դրութիւն նոցա: Նոյնպէս և ի ժամանակին ընկալեալ եմք զգումար մի 30 անգլ. ոսկւոյ նուիրաբերութեան ազգայնոց մեքոց Թանթայի ի ձեռն Յանձնաժողովոյց, և յլեալ եմք զկոնգակ առ նսաս:

Արգ՝ այսու կոնգակաւ մերով հայրապետական յայտնեմք սիրեցեալ մերազնիկց տեղոյց և պատուական անդամոց Յանձնաժողովոյց զլիաշուրթն մեր գոհունակութեան հանդերձ օրհնութեամբ, զի զովէլի և օրինակելի գործունէութեամբք պատուաբեր հանգիսանայք առաջի ազգին և նոյն իսկ օտարաց Օրհնել Օրհնեմք ըզ-

քրոնաջան վաստակն և ճերմակ մաղթեմք ի նախախնամութենէ վառն ամենեցունցդ զի երջանկացուցէ զկեանս ձեր երկայնաւորք հանդերձ դերգաստանօք, և պարգեւսցէ միշտ քաջասուջութիւն կենաց և յաջողութիւն յամենայն գործըս ձեր բարիս։ Ամէն։

(ստոր.) Մ. Կ. Ս. Հայոց

ՅՈՅՅԻԿԻՆ ԱՌԹԻԻ

Հետեւեալը մեզի հաղորդուած է հրատարակութեան համար։

Հ. Յ. Գաշնակցութեան Ալեքսանդրիոյ Անթակոմիտէն վերջերս նամակ մը ուղղելով Պօլսուսեան վարժարանի Հոգաբարձութեան կը յայտարարէ թէ ինքը ոչ ուղղակի և ոչ ալ անուղղակի մասնակցութիւն մը չունի այն սպառնալիքներուն որոնք կատարուած են վերջերս մէկ քանի գաշնակցական անհատներու կողմէ Հոգաբարձութեան դէմ։

Ծան. խմբ.~ Ուրախութեամբ կ'արտասուենք վերոյիշեալ յայտարարութիւնը, որ ցոյց կուտայ թէ, ինչ որ արդէն վստահօրէն գիտէինք, Հ. Յ. Գաշնակցութիւնը ու է կերպով միջամտած չէ Պօլսուսեան վարժարանէն անկարողութեանը համար ճամբուած ուսուցչի մը պաշտպանութեան

Յեղափոխական կուսակցութիւնները, եթէ
իրենց բարոյական վարկին նախանձախնդիր են,
պէտք է միշտ հեռու մնան մասնակցելէ այնպիսի
տեղական ինդիւիւներու որոնք բնաւ յարաբերու-
թիւն չունին իրենց ազգանուէր նպատակին հետ:

Գարշ այն անհատներուն որոնք յեղափո-
խական կուսակցութեան մը կը յարին զայն մի-
միայն իրենց անհատական ու նիւթական շահե-
րուն գործածելու ամենաստոր մտածութեամբ և
առանց յեղափոխութեան սուրբ գործին ամենա-
փոքր զոհարելութիւն մը ընելու, ըստ մեզ ոչ
թէ միայն կ'անպատուեն այն կուսակցութիւնը
որուն կը պատկանին, այլ միանգամայն այն ազ-
գը որուն մէկ անգամը ծնած են:

Ամէն պարագային, ինչպէս վերջ ըսինք, Ա-
զեքսանդրիոյ Նեթակօմիտէին յայտարարութիւնը
չաւ դաս մըն է ամէն անոնց համար որոնք քիչ
չատ տրամադրութիւն ունին իրենց տրուած գա-
տերէն օգտուելու:

ՉԱԻՆՇՏՏԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ

Եզիպտոհայ պապութիւն բոլոր զաւելչտակա-
նութեանց վրայ կը պակսէր միայն զաւելչտական
տարեցոյց մը: Արդ, կ'իմանանք թէ մեր համակ-
րելի աշխատակիցը՝ Երօտ՝ պատրաստած է «Յա-

զագս Եգիպտոսի Պատուարժան Ազգայնաց», զու-
ւեշտական տարեցոյց մը, որուն կցուած է «զու-
շակութիւն դիպաց» մը: Այս տարեցոյցին մէջ
օչը օրին պիտի երևան 1907 տարուան մէջ ան-
դի ունենալիք անգլական ազգային կարևոր եղե-
լութիւնները, իրենց ամէն մանրամասնութեամբ:

Փափաքողները կրնան այժմէն արձանա-
գրուիլ բաժանորդներու տոմարին մէջ, որ բայ-
ուած է հրատարակչին Տ. Գրիգոր Նազարէթեանի
տպարանին մէջ, ուի Սթամպուլ թիւ 16:

ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆՆԵՐՈՒ ԱՆՄԻՍ.ՖԱՆՈՒԹԻՒՆԸ

Հինգշաբթի իրիկուն է:

Տիգրան Երկաթ Միութեան սրահը լոյսերով
ողողուած: Խումբ խումբ Դաշնակցականներ, Հն-
շակեաններ, Չէզոքեաններ կ'երթեկեն սիկա-
ռէթի մուխերու ամպտութեան մէջ որոշուած
ժամուն սպասելով:

Կովզասեան Դաշնակցականներ եկած են վը-
կան ըլլալու կատարուելիք Մեծ Գործին: Տիգ-
րան Երկաթը պիտի փրկուի աս գիշեր:

Ու կը հնչէ սպասուած ժաճը: Իննու կէս:
Եւ ներկաները զոյգ զոյգ կը մանեն ժողո-
վասրահ: Լռին իրարանցում մը ամենուն սրտին
մէջ: Անվստահ նայուածքներ, ամենուն աչքին
մէջ անխուսափելիօրէն:

Հնչակեաններ,- միութեան համար հոն եկած, - «Շարժում» ի մէջ Դաշնակցութեան դէմ գրուածք մը կը կարդան ու կը ծիծաղին:

Դաշնակցականներ, - սահմանադրական պայքարէն խրատուած, - եկած են հոն բայց ինչպէ՛ս..

Այդ՝ իրենց դէմքին վրայ կը կարդացուի:

Վերջապէս ներս կը հրաւիրուի Հնչակեան Նահանգային Վարչութեան դեռաբուսիկ անդամը:

Բայց, ան ինչ խոփու աշտայայտութիւն:

Ու յանկարծ ի մեծ զարմացումն ամենուն կը յայտարարէ թէ ժողովը պէտք է ըլլայ դռնփակ որովհետեւ չեն ուզեր որ «ամէն» դաշնակցական ներկայ ըլլայ ժողովին: «Ժողովը պային ժողով» մը՝ դռնփակ է...

Ու բոլոր Դաշնակցականները ոտքի կ'ելլեն...

Հէ՛ . Մեզք մեր տածած յոյսերուն...

Շունն ու կատուն մէկ պարկի մէջ չը դրուիր կոր եղբր...:

Ծան. Խմբ. - Վերագրեալ տեղեկութիւնը զոր մեզ հազորգած է հինգշաբթի դիշերուան գումարումին ներկայ գտնուող ո՛չ-չէզոք, սակայն արժանահուատ անձ մը, քիչ մը պաղ ջուր կը լեցնէ այն գեղեցիկ երազներուն վրայ որոնցմով կ'օրօրուէինք անցեալ շաբթուան «Ազատ Խօսք» ի առաջին և երկրորդ էջերուն մէջ:

Բարեբախտաբար վերջին պահուն կիմանանք թէ՛ անհաճոյ միջադէպին յառաջ բերած ցաւալի ազդեցութիւնը կարելի եղած է մեղմացնել և թէ բանակցութիւնները պիտի վերջուկըսին:

Ըստ մեզ գործնական և օգտակար արդիւնքի մը յանգելու համար ամէն Դաշնակցական, Հնչակեան կամ Չէզոքեան որ պիտի մասնակցի Տ. Ե. Միութեան վերակազմութեան համար եղած գումարումներուն պէտք է ժողովի սրահէն ներս մտնելէ առաջ վրայէն հանէ իր դաշնակցական, հնչակեան կամ չէզոքեան վերարկուն և այնպէս ներս մտնէ: Որովհետև սրչափ առեն որ այդ նետո՞յ (տեղն է ըսել) պատմուճանը վրանին կրեն. իրարու խօսք չպիտի հասկնան: Եւ իրարու խօսք չհասկնալը սկիզբն է անմիաբանութեան՝ մայր ամենայն չարեաց. ամէն:

ՅՈՒԱԼԻ ԿՈՐՈՒՍՏ ՄԸ

Կովկասեան հայ բեմը մեծ կորուստ մը ունեցած է յանձին ծանօթ տաղանդաւոր դերասան Գ. Պետրոսեանի, որ երկարատև եւ ծանր հիւանդութենէ մը ետք՝ հոկտեմբեր 28 ին, շաբաթ օր, մեռած է Նոր-Նախըլեանի մէջ: Պետրոսեան 25 տարիէ ի վեր ինքզինք նուիրած էր հայ բեմին և իբրև կարող արուեստագէտ մեծ

անուն շինած էր Կովկասի մէջ:

Մեր բարեկամը Տ. Արմենեան, որ մտան ճանչցած հանգուցեալ արուեստագէտը, խոստացած է մեզ յատուկ յօդուածով մը «Ազատ Խօսք»ի ընթերցողներուն ճանչցնել զայն:

ԴԱՏ

Լուսաբեր դատ բացած ըլլալով Ազատ Բեմի դէմ, Ազատ Բեմ ևս դատ բացած է Լուսաբերի դէմ: Ազատ Բեմ իր այսօրուան թիւին մէջ կը ծանուցանէ թէ Լուսաբերի դէմ իր բացած դատին գատավարութիւնը յետաձգուած է գեկտեմբեր 5, չորեքշաբթի օրուան. Լուսաբեր եւս իր այսօրուան թիւով կը ծանուցանէ թէ՛ Ազատ Բեմին դէմ իր բացած դատին գատավարութիւնը յետաձգուած է գեկտեմբեր 5, չորեքշաբթի օրուան:

Շատ հաւանական է որ գեկտեմբեր 5, չորեքշաբթի օրը ուրիշ օրուան մը յետաձգուի Լուսաբեր-Ազատ Բեմեան գատավարութիւնը, բայց ապահովաբար օր մը պիտի գայ որ այդ գատաստանը տեղի պիտի ունենայ:

Արդ, մտովի փոխադրուինք այդ օրը, երթանք դատարան, մտնենք սրահէն ներս, գլխարկնիս հանենք ու նստելով մտիկ ընենք այս գատը:

Դատաւորը ~ Ո՞վ Լուսաբեր է ինչո՞ւ դատ
բացիր Ազատ Բեմի դէմ և դուն, ո՞վ Ազատ Բեմ
ինչո՞ւ դատ բացիր Լուսաբերին դէմ:

- Գաւաճան ըսաւ ինձի անիկա:
- Մտանիչ ըսաւ ինձի անիկա:
- Ոճրագործ ըսաւ ինձի համար:
- Մարդասպան կոչեց ինձի հրապարտկաւ:
- Գողութիւն ըրած ես ըսաւ:
- Խարբբային մէկն ես ըսաւ:
- Լկաի, սրիկայ, անպիտան, գարշելի, պո-
ռաց երեսիս:

~ Սինըբոր, առաւ փախաւ, կեղծարար, ճիզ-
վիթ գոչեց ետեէս:

Դատաւորը (Հայրաբար). ~ Զաւակներս ձեզ
յայտարարութիւններէն հասկցայ երկուքնուդ ալ
ի՞նչ ծաղիկներ ըլլանիդ, ուրեմն, ըստ պատժա-
կան օրինաց 100րդ յօդուածին 69րդ յաւելուա-
ծական տրամադրութեան դուք պրճ. Լուսաբեր
դատապարտուած էք Կիպրոսի որբանոցին շահա-
գործման պատմութիւնը պատրաստել հանդերձ
բացատրական ծանօթութեանց և դուք պարոն
Ազատ Բեմ պէտք է ցոյց տաք ի նպատակով
կասի կարօտելոց ձեր կատարած հանգանակու-
թեան մանրակրկիտ հաշիւը, հանդերձ հանդա-
նակեալ դումարին Կովկաս հասած և իր նպա-
տակին գործածուած ըլլալուն մասին պէտք ե-

ղած գշարօր ապացոյցներուն։ Գայէ՛ք և այլ ևս մի՛ մեղանչէք։

Կենթադրենք որ եթէ ո՛չ ճիշտ այսպէս գոնէ ասոր մօտ բան մը պիտի ըլլայ այդ դատաւարութիւնը։

Ըստ մեզ կարծենք բոլորովին աւելորդ էր հայ երկու թերթերու իրարու դէմ արձակած «անկէտրատ»ը տեղական դատարանին առջև հանել։ Այդ տեսակ խնդիրները լուսագոյն է իրարու մէջ կարգադրել։ Անգամ մըն ալ իրաւունք ունի լուսահոգի Մեծն Նաբոլէոն որ խորհուրդ կուտար աղտոտ լաթերը ընտանեբար լուալու,

Սա ևս պէտք է նկատի առնել որ լրագրական բանակուիւններու դատաւորը միշտ հանրային կարծիքն է եւ անոր հարկ է թողուլ վճիռ տալ։

Լուսաբերի և Ազատ Բեմի կուիւը կը նմանէր երկու գինսով կառավարներու կուիւին որոնց կողքերը իրար զարնուելով, պահ մը կը կենան և զիրար կը լուան «զորս դու պատուիրեցեր»։

Կառավարները սակայն հայհոյելէ ետքը դատարան չեն դիմեր՝ այլ ընդհանրապէս ախուս։

Կրնային անոնց օրինակին հետեւելու։

ՄՕՌՆԻՆԿ ՍԹԱՐ

Անձնաւորութիւն մը, որուն անկեղծութեան մասին ու եւ է կասկած չենք ունեցած քսան տարիէ ի վեր՝ հետեւեալ զարմանալի եղելութիւնը պատմեց, ի ներկայութեան մէջ քանի բարեկամներու որոնց ոչ կուսակցական հանգամանքը ապահով երաշխաւորութիւն մը կրնայ համարուիլ.

- Անցեալները, ըսաւ մեր ակնարկած անձնաւորութիւնը, Գահիրէէն ցերեկուան ճեպընթացով տեղս ժամանեցի, յատկապէս տեսնուելու համար Հէր Քէլէրմանի հետ, զուտ անհատա՛յան գործի համար. Այդ պարոնը, շարունակեց վերոյիշեալ անձնաւորութիւնը, երեք տարիէ ի վեր Ալեքսանդրիա հաստատուած է եւ մասնաւորապէս կը զբաղի հնդկահաւի եւ այլ փետրաւոր, երկօտանի եւ ընդոճին անասուննեկ ու ակրաներու արտածութեամբ եւ ընդհանուր ներկայացուցիչն է Նօրթ Տէօյչ Ալեքընֆաւէր տան որ հնչկահաւի ակրաներու ընդարձակ գործառնութիւններ կ'ընէ Համպուրկի եւ բովանդակ հիւսիսային Գերմանիոյ մէջ:

Հէր Քէլէրման կը բնակէր այն փողոցը որ ընդհանրապէս ծանօթ է Ալեքսանդրիոյ մէջ Շէրիֆ Փաշա անունով եւ բնակարանին թիւն ալ կը համապատասխանէր Առաքելոց թիւին, Յուզայի մասնութենէն եւ վտարումէն տնտիջապէս յետոյ, այսինքն թիւ 11: Ուստի ուզողակի դիմեցի այդ թիւը եւ պօսպէն՝ զարմանահրաշ ապշութեամբ՝ լսեցի որ յիշեալ պարոնը տասը օրէ ի վեր ձգած է իր բնակարանը եւ այլուր փոխադրուած:

- Գիտե՞ս նոր հասցէն, հարցուցի պօսպին:

- Մուշ արիֆ, պատասխանեց, որ հայկական հիւսաքանչ բարբառով կը թարգմանուի՝ «չեմ գիտեր»:

Երկար փնտռումներէ կարք, վերջապէս գլխաւորապէս մը ինձ ըսաւ որ Հէր Քէլէրման այժմ իր ընտանեկանը փոխադրած է Մօսկինի Սթարի վրան գտնուող տան մէջ:

- Մօսկինի Սթար, հարցուցի ինչ է այդ նոր լըրագիրը:

- Լրագիրը չէ պատասխանեց գլխաւորապէս անձը, այլ նոր բացուած խանութ մը պատկերազարդ քառթ բութաներու համար և որուն տէր և սնօրէնն է Թերթիկ օրաթերթի ծանօթ վարիչ Տ. Երուսնդ Անդրէասեան:

- Ո՞ւր է այդ խանութը:

- Զարմանալի՜ հարցում, դռնէն խօսակիցս, Մօսկինի Սթար աւելն մարդ գիտէ թէ Պուլվառ Ռամիէ թիւ 22 կը գտնուի:

Հազիւ թէ հասցէն իմացայ, 16 ձիու զօրութիւն ունեցող օթօմօպիլի մը պէս վազեցի Պուլվառ Ռամիէ, ժամ առաջ տեսնելու համար Հէր Քէլէրմանը, որուն հետ, ինչպէս ըսի, կարևոր և զուտ անհատական գործեր ունէի:

Բայց հազիւ թէ Մօսկինի Սթար խանութին առջիւ հասայ ամէն բան մոռցայ, անհատական գործ, Հէր Քէլէրման, հնդկահաւի սկոպայ ևն. ևն. Մէյ մը որ Մօսկինի Սթարի ցուցափեղիը աչքիս զարկաւ, կարծես աչքս սեղէն ելաւ. եզրայր աս ի՞նչ հրաշալի. նորագիւտ, չգտնուած պատկերազարդ քառթ բութաներ ևն, այդ ի՞նչ հիանալի պատկերներ, քրիսթմէսթի քառթեր, սիւրբբիզներ, տեսակ տեսակ նորութիւններ... Ժամերով զիտեցի ու զիտեցի, վերջապէս ոտքերս ինքնաբերաբար խանութէն ներս մտան, սկսայ քառթ բութաները քննել, ո՞րը ձգեմ ո՞րը առնեմ, մէկը միւսէն գեղեցիկ, նայեցայ որ չպիտի ըլլայ, միւսիւ Անդրէաս-

եան ըսի, սա ամէնէն ալ մէյմէկ հատ զատէ՛ և ծրար մը ըրէ՛ ու 4800 քառթ բօսթալ առնելէ ետքը զուրս ելայ խանութէն, աչքս ցուցափեղկին վրայ մնացած:

Այս զարմանալի պատմութեան չպիտի հաւատա-
յինք եթէ մենք ալ նախապէս այցելած չըլլայինք Մօս-
նինկ Սթարը որ եզանակիս ձմեռնային նորութիւ-
նըն է:

Չմոռնանք՝ կարծեմ՝ ըսելու թէ այդ նորարաց
խանութը կը գտնուի Պուլվառ Ռամլէ թիւ 22:

Անոնք որ կ'ենթադրեն թէ ասիկա պարզ ծափու-
ցում մըն է, չարաչար կը սխալին: Եւ ծանուցում չըլ-
լալուն ապացոյցը այն է թէ՛ յօդուածին տակ ստորա-
գրուած է:

ԿԵՂԱՄ

ՇԻՐԱԿ

Ստացանք Շիրակի Ծրդ թիւը (հօկոտեմբեր)

հետեւեալ պարունակութեամբ:

Ռուսիոյ հետ	Պ. Արփիարեան
Կիլիկեան Սուէտիա	Շ. Շիշմանեան
Մինչև Ե՞րբ	Ա. Արփիարեան
Մուրաա խորհրդանշանը	Սիրայր
Կարմիր և ճերմակ տէրրօրները	Ս. Եազըճեան
Գեղեցիկ աշնան գեղօնը	Տիւքէնուա
Արև. խնդրին բարեշրջումը	
Գրախօսական	Հ.
Ազգային տեսութիւն	Ա. Ա.

New Victoria Hotel ՍԱՆ ՍԹԷՅԱՆԾ

ՆՈՐ ՎԻՔՐՈՌԻԱ ՑԹԷՂ Ազիբանդրիոյ Մօտ
ՅՈՒՆԻՍԻ ՄԷՁ ԲԱՅՈՒԱԾ Հալիթ Թիւ 2

Առաջին կարգի օթել, փամստորապէս շինուած, այժմու լոյրը հանդատուէտութեան պայմաններով, Հիանալի ճաշարան, սալօն, ծխարան, Մասնաւոր ճաշարան: Ընդարձակ պատշգամ և պարտէզ: Ելեբաղ-րական լոյս: ՉԱՒԱՒՈՐ ԳԻՆ: Թեկիֆօն Թիւ 370: Հե-ազարական հասցէ՝ Նիւ Վիքթորիա, Ռամպէ: Թոսմվա-յով տասը վայրկեան Ալիբանդրիայէն:

Ս. Գ. ՌէՂԻԿ, ՏԵՕՐԷՆ

Յ. Գ.--Մասնաւոր դին կառավարական պաշտօն-
օսներու և զինուորականներու համար: Բոլոր սեն-
ձ ակնեծը ծովուն վրայ կը նային:

ՍԵՆ ԱՇՄԱՍՆՈՅ
ՈՐԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇՄԱՍՏՅՈՒՆ
Պ. ԵՄԱՐԻԻ ԲՈՆ
15 RUE STAMBOUL 15
ALEXANDRIE

Այս աշխատանքն ըլլալ էր պարտաւոր ինչ որ
զրկել և նիւթէ զուտ իրարմէր: Բարձրու. Գլխիկ
Պ. զառու կնիքներ, արծաթէ և ոսկի լեռնարմեր,
Քաւիներ ևն. Չեկերաֆիթ և Կոլորադոյաֆիթ
Վերաբերեալ գործեր:

Յարմարեալ ամեն տեսակ զարկեր եւս և արտ
Կշուներով: Կարտակեալ իրարայրերն, այլա
ժարներ, Նախապայմաններ, արտադրներ, Կարտե
ժարներ, Նախապայմաններ, Կարտե ընդ
Մասնաւոր ինքն ինքն և մարտիկան: Կա
ժար զին:


Այս աշխատանքը կերտու և կը վաճառարներ
Ալիբանդրիոյ, Քալիթի և բոլոր երկրորդայն աշ-
րոնց: Բարձրակարգ քիւմ եղած բոլոր յանձնա-
տարութիւնները ամենամեծ ինքնակող կը կատար-
ուին և քալ կը քան ամենի գեղատեսիլ մար-
տիկներ:

Ստոր գործատուներու զինկէլ արտը կանչել
անցած և արկել արտ աշխատանքը:

«ՍՁԱՏ ԽՕՍԲ» ՉԵՌԻԿԷ
ԿԸ ՎԱՃԱՌՈՒԻ

Ալիբանդրիա՝ Տ. Յ.
Ղազիկեանի քով և Շէրիֆ
Փաշա լրագրավաճառ Տ.
Թեղալիանի իսնութը:
Գահիրէ՝ լրագրավաճառ
Տ. Հուսնիկ և Կոլորն Բէօշ-
քի քով և «Լուսարկ»
Թերթի գրուիչին մօտ:

Նախորդ շարթուան
Թիւերը կը վաճառուին
կրկին զինով:



“ԱՂՍ ԽՕՔ” ի Պայմանները

— ԱՂՍ ԽՕՔ • 40 ՀՐՏԱՐԱՆՈՒ ԵՐԲՈՒ ՕՔԵՐ
Եզիպոսի համար բաժնեկիցն է

40 ՔԻՐԸ	40 ՂՐԵ ՈՂԶ
20 ”	20 ” ”

ԱՐՏԱՍՈՂՄԱՆ

ԵՒՐՈՒՄ	40 ՔԻՐ	80 ՏՐՈՒՔ
ՈՒՍԻՒՄ	” ”	4 ԴՈՒՄԼԻ
ԱՍԵՐԻՎՑ	” ”	2 ՏՈՒՍ

Բաժանադարութիւնը կ'սկսի իջ
ՀԱՏԸ 1 ՂՐԸ • ՈՂԶ

“ԱՂՍ ԽՕՔ” ի համար բաժնեկիցին կ'ամ
որ է է գրութիւն պէտք է ուզել նե-
տեւոյ հասցէին”

K. Nazarethian

Rue Stamboul

ALEXANDRIE I EGYPT

Մանրագրութեան կրկնուճակի Գաղտնաբեր
պրոպագանդայի

Պատասխանատու խմբագիր է ՈՏԸԱՆ

Տպագրութիւնը ԲԱՂԱՔԻՔԻԱՆ ԵՂԵՆԱԿՅԻՄ